**ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ Հմր 228 ՕՍՄԱՆԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐԸ

*Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ Մատենադարանը համախմբում է մայրենի և օտարալեզու ձեռագրեր, որից շուրջ 2249՝ արաբատառ (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն) ձեռագրեր են: Արաբատառ ձեռագրերից 336-ը օսմաներեն են:*

*Օսմաներեն ձեռագրերի հավաքածուն հիմնականում 16-19-րդ դարերի է: Այս ձեռագրերի բովանդակային հարուստ բազմազանության մեջ ուշադրության արժանի է նաև Մատենադարանի Հմր 228 ձեռագիրը, որը գավազանագիր է:*



Ձեռ. Հմր 228, 3ա

*Ձեռագիրն ունի 8 թերթ, որի 5 թերթերը գրված չեն (1աբ, 2աբ, 6բ, 7աբ, 8աբ): Գավազանագիրը աղյուսակաձև է՝ ութ սյուներով: Տողերը տարբեր են՝ 13-20: Գիրը նասխ է: Ունի նախաբան, որը ներկայացնում է ձեռագրի բովանդակությունը (3ա): Վերջում կա հիշատակարան գրչության ժամանակի, վայրի և գրչագրի մասին (6ա):*

*Գավազանագիրը բովանդակում է Օսմանյան տերության սկզբնավորումից (Օսման Առաջին՝ (հիջրի 699/1299) մինչև 31-րդ Սուլթան Աբդուլ Մեջիդ խան իբն ալ Սուլթան ալ Ղազի Մահմուդ խանի գահակալումը (հիջրի 1255/1839-40) կայսրության գահին բազմած սուլթանների ծննդյան, գահակալության, մահվան (կամ գահազրկման), իշխանության և կյանքի տևողության թվականների և նրանց դամբարանների վերաբերյալ ցուցակը:*

*Ձեռագիրը հետաքրքիր է և կարևոր իր գրչության վայրով: Գավազանագրի համառոտ հիշատակարանը վկայում է, որ գրիչ Միրզա Աբդուլ Հասան Քադի Զադեն գավազանագիրը գրառել է հիջրի 1270 (1862-63) թվականին կազմված օսմանյան ազգատոհմի անվանացուցակից, հիջրի 1314 (1896-97) թվականի ռեջեբ ամսի 8-րդ օրը, էջմիածնի գավառի (ուեզդի) «Թէքիէ»[1] բնակավայրում[2]:*

*Գավազանագրի հեղինակը անհայտ է:*

*Սուլթանների անվանացանկեր և գավազանագրեր կան նաև հայերեն ձեռագրերում (Մատ. ձեռ. Հմր 1786, ձեռ. Հմր. 10716, ձեռ. Հմր 1041 (նախկին երուսաղեմյան ձեռ. Հմր 1329 դրսի ժապավեն, այսուհետև դ. ժ. Հմր 1041/ 1329):*

*Հմր. 1786 ձեռագրում եղած Երեմիա Քյոմուրճյանի՝ արձակ «Համառօտ պատմութիւն Թագաւորաց Օսմանցոց» գործը ամփոփում է Սուլթան Օսմանից մինչև Մուստաֆա Երկրորդի իշխանության շրջանը՝ 1695 թ.[3]:*

*Ձեռ. Հմր 10716 «Գիրք պատմութեան Օսմանցոց Թագաւորաց»-ը երկու հեղինակների գործ է՝ Երեմիա Քյոմուրճյանի հիշյալ երկի ընդօրինակության և ընդօրինակողի՝ Սարգիս դպիր Կոստանդնուպոլսեցու կողմից շարունակված՝ մինչև օսմանյան 27-րդ Սուլթան Մուստաֆա Երրորդի իշխանության վերջը (1808 թ.) հասնող «Պատմութեան Օսմանցոց Թագաւորաց»-ի[4]:*

*Դ.ժ. Հմր 1041/1329 «Պատմութիւն Օսմանեան Թագաւորաց»-ը Հմր 10716 ձեռագրից օսմանյան պատմության սկզբնավորումից մինչև 1781 թ.՝ «Իզէթ Մուհամմէտխ, որ յառաջ էր զարպհանէ էմինի բարեբարոյ այր» հատվածի ընդօրինակություն է[5]:*

---

[1] Ղևոնդ Ալիշանը Թէքիէ=Թաքեայ անունով թուրքական գյուղ է նշում Արագածոտնի գավառում, Փարպի գյուղի մոտակայքում՝ «Գրեաթէ կից է' ի Փարպի' ի հիւսիսոյ կողմանէ՝ Թաքեայ գիւղ Թուրքաց, 120 տանց, ոռոգեալ ականակիտ աղբերօք» (Տե՛ս Հ. **Ղևոնդ Վ. Մ. Ալիշան**, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ - Ս. Ղազար, 1830 թ., էջ 160): «Թէքիէ»՝ բառարանային բացատրությունում նաև «Մենաստան»:

[2] بيك ايكييوز يتمشنجى سنه ده مرقوم اولان نسبنامه نك يوزوندن زينت تحرير ايله مزيّن اولوب ١٣١٤ نجى سنه ده رجبك ٨ نجى يومنده كاتبى ميرزا عبد الحسن قاضى زاده ساكن تكيه از اويزد ايچميادزين

[3] Ձեռ. Հմր 1786 «Համառօտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց», էջ 1ա-36բ:

[4] Ձեռ. Հմր 10716, ««Գիրք Պատմութեան Օսմանցոց թագաւորաց» համառօտակի ժողովեալ եւ արտահանեալ ի լիակատար պատմութեանց նոցին՝ զգլխաւոր զրոյցս եւ զգործս ծաղկաքաղ արարեալ յումեմնէ բանասիրէ (իմա՝ Երեմիա Քյոմուրճյանի - **Ա. Ա.**) վասն սքօնելոյ ազգիս մերոյ: Եւ հասեալ մինչեւ Իբ (22) երորդ թագաւորն Մուստաֆայ Երկրորդ եւ այն եւս ոչ լրացեալ պատմութեամբ եւ մեք իբր թէ լրացուցաք եւ իսկ յինքէնէ նոյն պատմութենէն:
Եւ այժմ յամի Տեառն 1771 եւ ի մերս հաշուի ՌՄԻ (1220) յամսեանն յունվարի գաղափարեան եղեւ ի յանսղալ օրինակէ, բայց յոյժ հնացեալ գրքէ, կարի շրջահայեաց եւ խիստ անձկութեամբ վասն գոլոյ օրինակին շղագիր եւ բազում տեղիս խանգարեալ եւ աւերեալ գոլով:
Ի Սարգիս իբր դպրէ Կոստանդնուպօլսեցւոյ չնչին պաշտօնէի Սրբոյն Յակոբայ Մծբնեցոյ Հայրապետի մանկատան, շեշտակի գրմամբ եւ այն շղագիր», էջ Օա:

[5] Դ.ժ. Հմր 1041/1329, «Պատմութիւն Օսմանեան Թագաւորաց», էջ 3-186:

Այս երեք ձեռագրերը բնագրային նույնականություն ունենալուց բացի, ունեն ներկայացվող գավազանագրի համար համեմատա-ընդհանրացնող կարևորություն: Օսմանյան սուլթանների պատմությունները, գրված լինելով սուլթանների իշխանության պատմական ժամանակահատվածներով, սուլթանների անվանն անմիջապես հաջորդող նրանց ծննդյան, գահակալման տարիքի և թվականի, իշխանության տևողության, գահազրկման և մահվան թվական ժամանակային հատվածները միանգամայն կառուցվածքով և բովանդակությամբ համեմատելի, իրար լրացնող գավազանագրեր են:

Ներկայացված Հմր 1786 և դ.ժ. Հմր 1041/1329 ձեռագրերում առկա են նաև օսմանյան սուլթանների հայերեն գավազանագրեր:

Հմր 1786 ձեռագրի Երեմիա Քյոմուրճյանի «Համառօտ պատմութիւն եւ անուանք որդոց Թագաւորաց օսմանցոց» խորագրով գավազանագիրը (այսուհետև Ա գավ.) ընդգրկում է «Թագաւորութիւնք Օսմանցոց որք Ալի Օսման կոչեցան, տօվլէթն սոցա սկիզբն էառ ի սանէն 700 տաճկացն էճ (700)-ին կառաւարելով յորդոց յորդիս մինչ ցայժմ որ է սանէն 1115»՝ օսմանյան 22 սուլթանների ցանկը՝ ծննդյան, գահակալության, թագավորության տևողության, կյանքի տևողության թվականներով և հրատարակվող բնագրից ավելի լայն պատմական տեղեկություններ սուլթանների նվաճումների ու ունեցած որդիների վերաբերյալ[6]:

Դ.ժ. Հմր 1041/1329 ձեռագրում եղած երկու գավազանագրերից «Թագաւորութիւնք Օսմանցւոց, որք Ալի Օսման կոչեցան, տէվլէթ նոցա սկզբնաւորեալ ի սէնէէն 700-ին, կարգաւորեան յորդւոց յորդիս մինչեւ ցայժմ» խորագրովը (այսուհետև Բ գավ.) 30 սուլթանների ցանկ է՝ Օսմանից մինչև սուլթան Մուստաֆա Երրորդի գահակալության հիջրի 1222/1807-08 թ.՝ գահակալման տարիքի և գահակալության թվականի, իշխանության տևողության և գահազրկման կամ մահվան թվականի տվյալներով (լրացված չեն 27-րդ և 28-րդ սուլթանների սյունակները)[7], իսկ երկրորդը (այսուհետև՝ Գ գավ.) 31 սուլթանների անխորագիր ցանկ է՝ միայն գահակալության տարեթվի և գահակալության տևողության տվյալներով, Օսման Առաջինից մինչև Սուլթան Ապտըլ Մաճիտ Առաջինը՝ «Սուլթան Ապտըլ Մաճիտ ١٢٥٥ (1255/1839-40) սէնէին ի գահ իշխանութեան նստեալ լինի ի քսան և երկու տարեկան...»[8]:

***

Այսպիսով, Մատ. ձեռ. Հմր 228 օսմաներեն Օսմանյան գահակալների գավազանագիրը հրապարակում ենք՝ համադրելով Մատենադարանի Հմր 10716 և դ.ժ. Հմր 1041/1329 հայերեն ձեռագրերում եղած գավազանագրային հատ-

---

[6] Ձեռ. Հմր 1786, «Համառօտ Պատմութիւն եւ Անուանք որդւոց Թագաւորաց Օսմանցոց», էջ 37ա-40բ:

[7] Դ.ժ. Հմր 1041/1329, էջ 229-239:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 245-251:

վածների և ձեռ. Հմր 1786-ում և ձեռ. դ.ժ. Հմր 1041/1329-ում տեղ գտած Ա, Բ, և Գ գավազանագրերի հետ։ Համադրելիս նշել ենք միայն տարբերությունները՝ ծանոթագրությունների ձևով, հեռու մնալով մեկնաբանություններից։

Պահպանել ենք հրատարակվող գավազանագրի բնագրային կառուցվածքը։

Հանրամատչելի դարձնելու նպատակով վերծանել ենք օսմաներենը և ուղ-ղակի կառուցվածքում դրել ենք հայերեն թարգմանությունը, հիջրի թվական-ների կողքին հիշել ժամանակակից թվականները։

Հայերեն բնագրերի արաբանիշ և հայատառ թվանիշերին կից տրվել են փակագծերով ժամանակի թվանիշերը։

Պահպանվել են համեմատվող բնագրերի հայատառ թուրքերեն սէնէ-տա-րի, այ-ամիս, կիւն-օր բառերը։

ابتدای ظهور دولت علیّدن بو زمان معدلتنشان شاهانیه دك اریكه پیرای سلطنت اولان سلاطین عظام عثمانیه تاریخ

حضراتنك اسامی شریفه لریله ولادت و جلوس و ارتحاللرینی و سنین عمرو مدّت سلطنت و مدفن شریفلرینی مبینّ جدولدر.

**Օսմանյան նախամեծար տերության սկզբնավորումից մինչև ներկա վսեմաշուք գահակալի ժամանակները կայսրության գահին բազմած օսմանյան փառապանծ սուլթանների ծննդյան, գահակալության, մահվան (կամ գահազրկման), իշխանության և կյանքի տևողության թվականների և նրանց փառավոր դամբարանների վերաբերյալ ցուցակն է:**

| مدفن شریفلری<br>Փառավոր դամբարան-ներ | سنینی عمرلر<br>Կյանքի տևող. | مدّتی سلطنتلر<br>Գահակալ. տևող. | تاریخی ارتحاللر<br>Մահ. թվ. | تاریخی جلوسلر<br>Գահ. թվ. | تاریخی ولادتلر<br>Ծննդ. թվ. | اسامی شریفلری<br>Սուլթանների անունները | نمره<br>Թիվ |
|---|---|---|---|---|---|---|---|
| بروسه ده حصار ایچنده مناستر نام قبّهٔ معلاده مدفوندرلر<br>Բուրսայում, բերդի մեջ Մանաստըր անունով բարձր գմբե-թի ներfn է թաղված: | ٧٠<br>70[3] | ٢٧<br>27[2] | ٧٢٦<br>726 [1325-26] | ٦٩٩<br>699 [1299-30] | ٦٥٦<br>656[1] [1258] | سلطان عثمان خان غازی ابن ارطغرل خان غازی ابن سلیمان شاه<br>Սուլթան Օսման Խան Ղազի իբն Էրթողրուլ Խան Ղազի իբն Սուլեյման Շահ | ١<br>1 |
| پدرلری جوارنده مستقل مناستر نام قبّه دروننده مدفوندرلر<br>Հոր կողքին, Մանաստըր անունով իր կառուցած գմբեթի ներ-fn է թաղ-ված: | ٨١<br>81[5] | ٣٥<br>35[4] | ٧٦١<br>761 [1359-60] | ٧٢٦<br>726 [1325-26] | ٦٨٠<br>680 [1281-82] | سلطان غازی اورخان خان ابن سلطان عثمان خان غازی<br>Սուլթան Ղազի Օրհան Խան իբն Սուլթան Օսման Խան Ղազի | ٢<br>2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| بروسه خارجنده چكر كه نام محلّده تربه شريفه لرنده مدفوندرلر<br>Բուրսայից դուրս, Չեքիրգե կոչվող վայրում, փառաշուք դամբարանում է թաղված: | ٦٥<br>65[8] | ٣١<br>31 | ٧٩١<br>791[7]<br>[1388-89] | ٧٦١<br>761<br>[1359-60] | ٧٢٦<br>726[6]<br>[1325-26] | سلطان غازى خداوندكار مراد خان ابن سلطان اورخان غازى<br>Սուլթան Ղազի Խուդավենդիգյար Մուրադ Խան իբն Սուլթան Օրհան Ղազի | ٣<br>3 |
| بروسه ده جامع شريفلرى قربنده تربهٔ مخصوصه لرنده مدفوندرلر<br>Բուրսայում, փառավոր մզկիթին մերձ առանձնական դամբարանում է թաղված: | ٤٤<br>44[13] | ١٤<br>14[12] | ٨٠٥<br>805[11]<br>[1402-03] | ٧٩١<br>791[10]<br>[1388-89] | ٧٦١<br>761[9]<br>[1359-60] | سلطان غازى يلديرم بايزيد خان ابن سلطان مراد خان<br>Սուլթան Ղազի Յըլդըրըմ Բայազիդ Խան իբն Սուլթան Մուրադ Խան | ٤<br>4 |
| بروسه ده يشيل نام جامع شريفلرى جوارنده مدفوندرلر<br>Բուրսայում, Յեշիլ կոչվող փառավոր մզկիթի մոտ է թաղված: | ٤٣<br>43[16] | ٨<br>8[15] | ٨٢٤<br>824<br>[1421] | ٨١٦<br>816<br>[1413-14] | ٧٨١<br>781[14]<br>[1379-80] | چلبى سلطان محمّد خان ابن سلطان يلديريم بايزيد خان<br>Չելեբի Սուլթան Մուհամմեդ Խան իբն Սուլթան Յըլդըրըմ Բայազիդ Խան | ٥<br>5 |
| بروسه ده جامع شريفلرى قربنده تربهٔ منوّره لرنده مدفوندرلر<br>Բուրսայում, փառավոր մզկիթին մերձ, լուսավոր դամբարանում է թաղված: | ٤٩<br>49 | ٣٠<br>30[19] | ٨٥٥<br>855<br>[1451] | ٨٢٤<br>824[18]<br>[1421] | ٨٠٦<br>806[17]<br>[1403-04] | سلطان غازى مراد خان ثانى ابن چلبى سلطان محمّد خان<br>Սուլթան Ղազի Մուրադ Խան 2-րդ իբն Չելեբի Սուլթան Մուհամմեդ Խան | ٦<br>6 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| استانبولده جامع شريفلرى محرابى اوكنده تربهٔ عليالرنده مدفوندرلر<br>Ստամբուլում, փառավոր մզկիթի սուրբ սեղանի առջև, բարձրագմբեթ դամբարանում է թաղված: | ٥٣<br>53[23] | ٣٢<br>32[22] | ٨٨٦<br>886[21]<br>[1481-82] | ٨٥٥<br>855<br>[1451] | ٨٣٣<br>833[20]<br>[1429-30] | سلطان ابو الفتح محمّد خان غازى ابن سلطان مراد ثانى<br>Սուլթան Աբու ալ Ֆաթիհ Մուհամմեդ խան Ղազի իբն Սուլթան Մուրադ 2-րդ | ٧<br>7 |
| بنا بيوردقلرى معبد شريفلرنده مدفوندرلر<br>Շինությանը կից, փառավոր տաճարում է թաղված: | ٦٧<br>67[25] | ٣٢<br>32 | ٩١٨<br>918<br>[1512-13] | ٨٨٦<br>886<br>[1481-82] | ٨٥١<br>851[24]<br>[1447-48] | سلطان غازى بايزيد خان ثانى ابن سلطان فاتح محمّد خان<br>Սուլթան Ղազի Բայազիդ խան 2-րդ իբն Սուլթան Ֆաթիհ Մուհամմեդ խան | ٨<br>8 |
| نام همايونلرينه منسوب جامع شريف پيشكاهنده مدفوندرلر<br>Սուլթանների համար կառուցված փառավոր մզկիթի առջև է թաղված: | ٥١<br>51[28] | ٨<br>8[27] | ٩٢٦<br>926<br>[1519-20] | ٩١٨<br>918<br>[1512-13] | ٨٧٥<br>875[26]<br>[1470-71] | سلطان غازى سليم خان ابن سلطان بايزيد خان ثانى<br>Սուլթան Ղազի Սելիմ խան իբն Սուլթան Բայազիդ խան 2-րդ | ٩<br>9 |
| بنا بيوردقلرى جامع شريفلرى پيشكاهنده مدفوندرلر<br>Սուլթանների համար կառուցված փառաշուք մզկիթի առջև է թաղված: | ٧٤<br>74 | ٤٨<br>48 | ٩٧٤<br>974<br>[1566-67] | ٩٢٦<br>926<br>[1519-20] | ٩٠٠<br>900<br>[1494-95] | سلطان غازى سليمان خان ابن سلطان سليم خان<br>Սուլթան Ղազի Սուլեյման խան իբն Սուլթան Սելիմ խան | ١٠<br>10 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ايا صوفيهٔ كبير جامع شريفى قربنده مدفوندرلر<br>Այա Սոֆիա փառավոր մզկիթին մերձ է թաղված: | ٥٢<br>52[32] | ٨<br>8[31] | ٩٨٣<br>983[30] [1575-76] | ٩٧٤<br>974 [1566-67] | ٩٣٠<br>930[29] [1523-24] | سلطان غازى سليم خان ثانى ابن سلطان سليمان خان<br>Սուլթան Ղազի Սելիմ խան 2-րդ իբն Սուլթան Սուլեյման խան | ١١<br>11 |
| ايا صوفيه جوارنده تربهٔ شريفه ده مدفوندرلر<br>Այա Սոֆիա-յին մերձ, փառաշուք դամբարա-նում է թաղված: | ٥٠<br>50 | ٢٠<br>20[33] | ١٠٠٣<br>1003 [1594-95] | ٩٨٢<br>982 [1574-75] | ٩٥٣<br>953 [1546-47] | سلطان غازى مراد خان ثالث ابن سلطان سليم خان ثانى<br>Սուլթան Ղազի Մուրադ խան 3-րդ իբն Սուլթան Սելիմ խան 2-րդ | ١٢<br>12 |
| ايا صوفيه حرمنده تربهٔ سليم خان ثانى يانينده مدفوندرلر<br>Այա Սոֆիա մզկիթի գավթում, Սելիմ խան 2-րդի դամբարանի կողքին է թաղված: | ٣٨<br>38 | ٩<br>9[34] | ١٠١٢<br>1012 [1603-04] | ١٠٠٣<br>1003 [1594-95] | ٩٧٤<br>974 [1566-67] | سلطان غازى محمّد خان ثالث ابن سلطان مراد خان ثالث<br>Սուլթան Ղազի Մուհամմեդ խան 3-րդ իբն Սուլթան Մու-րադ խան 3-րդ | ١٣<br>13 |
| جامع شريفلرى جنبنده تربهٔ منوّره لرنده مدفوندرلر<br>Փառավոր մզկիթի մոտ, լուսավոր դամբարա-նում է թաղված: | ٢٨<br>28[37] | ١۴<br>14[36] | ١٠٢٦<br>1026 [1617] | ١٠١٢<br>1012 [1603-04] | ٩٩٨<br>998[35] [1589-90] | سلطان غازى احمد خان ابن سلطان محمّد خان ثالث<br>Սուլթան Ղազի Ահմեդ խան իբն Սուլթան Մուհամմեդ խան 3-րդ | ١۴<br>14 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| پدرلری تربه سنده مدفوندرلر<br>Հայրական դամբարանում է թաղված: | ۱۸<br>18 | ۴<br>4[39] | ۱۰۳۱<br>1031<br>[1621-22] | ۱۰۲۲<br>1022<br>[1613-14] | ۱۰۱۲<br>1012[38]<br>[1603-04] | سلطان عثمان خان ثانی ابن سلطان احمد خان<br>Սուլթան Օսման Խան 2-րդ իբն Սուլթան Ահմեդ Խան | ۱۵<br>15 |
| - | - | مدّت سلطنت اولی ماه ۳<br>Առաջին սուլթան. տևող.՝ 3 ամիս | فراغ ۱۰۲۷<br>Հրաժարվել է՝ 1027<br>[1617-18] | دفعهٔ اولی جلوس ۱۰۲٦<br>Առաջին գահակալ.՝ 1026<br>[1617] | ۱۰۰۱<br>1001[40]<br>[1592-93] | سلطان مصطفی خان ابن سلطان محمّد خان ثالث<br>Սուլթան Մուսթաֆա Խան իբն Սուլթան Մուհամմեդ Խան 3-րդ | ۱۶<br>16 |
| ایا صوفیه حرمنده قبل الفتح بنالنمش اولان قبه درونده مدفوندرلر<br>Այա Սոֆիա մզկիթի գավթի առջև, Ֆաթիհի համար կառուցված գմբեթի ներքո է թաղված: | ۴۷<br>47[42] | مدّت سلطن ثانیه ۱سنه ۴ ماه<br>Երկրորդ սուլթան. տևող.՝ 1 տարի, 3 ամիս[41] | فراغ ۱۰۳۲ ارتحال ۱۰۴۸<br>Հրաժարվել է՝ 1032<br>[1622-23]<br>Մահացել է՝ 1048<br>[1638-39] | دفعه ثانیه جلوس ۱۰۳۱ٔ<br>Երկրորդ գահակալ.՝ 1031<br>[1621-22] | - | سلطان مصطفی خان ابن سلطان محمّد خان ثالث | - |
| والد ماجدلری سلطان احمد خان تربه سنده مدفوندرلر<br>Փառավոր հոր՝ Սուլթան Ահմեդ Խանի, դամբարանում է թաղված: | ۳۱سنه ٦ماه<br>Տարի՝ 31<br>Ամիս՝ 6[43] | ۱۷<br>17 | ۱۰۴۹<br>1049<br>[1639-40] | ۱۰۳۲<br>1032<br>[1622-23] | ۱۰۱۸<br>1018<br>[1609-10] | سلطان غازی مراد خان رابع ابن سلطان احمد خان<br>Սուլթան Ղազի Մուրադ Խան 4-րդ իբն Սուլթան Ահմեդ Խան | ۱۷<br>17 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ايا صوفيه ده عميلری سلطان مصطفی تربه سنده مدفوندرلر<br>Այա Սոֆիայում, հորեղբոր՝ Սուլթան Մուստաֆայի, դամբարանում է թաղված: | ٣٤<br>34[46] | ٩<br>9[45] | ١٠٥٨<br>1058<br>[1648] | ١٠٤٩<br>1049<br>[1639-40] | ١٠٢٤<br>1024[44]<br>[1615] | سلطان ابراهيم خان ابن سلطان احمد خان<br>Սուլթան Իբրահիմ Խան իբն Սուլթան Ահմեդ Խան | ١٨<br>18 |
| بغچه قپوسنده والده لری ترخان سلطان تربه لرنده مدفوندرلر<br>Բաղչեի դռան մոտ, մոր Թերխանի կառուցած սուլթանական դամբարանում է թաղված: | ٥٣<br>53 | ٤٠سنه<br>٥ماه<br>Տարի՝ 40<br>Ամիս՝ 5 | ١١٠٤<br>1104[47]<br>[1692-93] | ١٠٥٨<br>1058<br>[1648] | ١٠٥١<br>1051<br>[1641-42] | سلطان غازی محمّد خان رابع ابن سلطان ابراهيم خان<br>Սուլթան Ղազի Մուհամմեդ Խան 4-րդ իբն Սուլթան Իբրահիմ Խան | ١٩<br>19 |
| جدا مجدلری سلطان سليمان تربه سنده مدفوندرلر<br>Պապի՝ Սուլթան Սուլեյմանի, դամբարանում է թաղված: | ٥١سنه<br>٨ماه<br>١١ يوم<br>Տարի՝ 51<br>Ամիս՝ 8<br>Օր՝ 11[51] | ٣<br>3[50] | ١١٠٢<br>1102<br>[1690-91] | ١٠٩٩<br>1099[49]<br>[1687-88] | ١٠٥٢<br>1052[48]<br>[1642-43] | سلطان سليمان خان ثانی ابن سلطان ابراهيم خان<br>Սուլթան Սուլեյման Խան 2-րդ իբն Սուլթան Իբրահիմ Խան | ٢٠<br>20 |
| جداعلالری سلطان سليمانن تربه سنده مدفوندرلر<br>Պապի՝ Սուլթան Սուլեյմանի, դամբարանում է թաղված: | ٥٤سنه<br>١ماه<br>١٧ يوم<br>Տարի՝ 54<br>Ամիս՝ 1<br>Օր՝ 17 | ٤<br>4[53] | ١١٠٦<br>1106<br>[1694-95] | ١١٠٢<br>1102<br>[1690-91] | ١٠٥٢<br>1052[52]<br>[1642-43] | سلطان احمد خان ثانی ابن سلطان ابراهيم خان<br>Սուլթան Ահմեդ Խան 2-րդ իբն Սուլթան Իբրահիմ Խան | ٢١<br>21 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| پدرلرى سلطان محمد رابع جوارنده مدفوندرلر<br>Հոր՝ Սուլթան Մուսթաֆա 4-րդի մոտ է թաղված: | ۴۰سنه ۹ماه ۷ يوم<br>Տարի՝ 40<br>Ամիս՝ 9<br>Օր՝ 7[56] | ۸<br>8[55] | فراغ و ارتحال ۱۱۱٥<br>Հրաժարվելն ու մահը՝ 1115 [1703-04] | ۱۱۰٦<br>1106[54] [1694-95] | ۱۰۷۴<br>1074 [1663-64] | سلطان مصطفى خان ثانى ابن سلطان محمّد خان رابع<br>Սուլթան Մուսթաֆա խան 2-րդ իբն Սուլթան Մուհամմեդ խան 4-րդ | ۲۲<br>22 |
| بغچه قپوسنده مرحوم والده سلطان تربه سنده مدفوندرلر<br>Բաղչեի դռան մոտ, լուսահոգի Վալիդե Սուլթանի դամբարանում է թաղված: | ٦٦سنه ۴ماه ۲ يوم<br>Տարի՝ 66<br>Ամիս՝ 4<br>Օր՝ 2 | ۲۸<br>28[57] | فراغ ۱۱۴۳ ارتحال ۱۱۴۹<br>Հրաժարվել է՝ 1143 [1730-31]<br>Մահացել է՝ 1149 [1736-37] | ۱۱۱٥<br>1115 [1703-04] | ۱۰۸۳<br>1083 [1672-73] | سلطان غازى احمد خان ثالث ابن سلطان محمّد خان رابع<br>Սուլթան Ղազի Ահմեդ խան 3-րդ իբն Սուլթան Մուհամմեդ խան 4-րդ | ۲۳<br>23 |
| پدرلرى سلطان مصطفى خان ثانى تربه سنى قربنده مدفوندرلر<br>Հոր՝ Սուլթան Մուսթաֆա խան 2-րդի դամբարանին մերձ է թաղված: | ٦۰سنه ۱ماه ۲ يوم<br>Տարի՝ 60<br>Ամիս՝ 1<br>Օր՝ 2 | ۲٥<br>25 | ۱۱٦۸<br>1168 [1754-55] | ۱۱۴۳<br>1143[58] [1730-31] | ۱۱۰۸<br>1108 [1696-97] | سلطان محمود خان غازى ابن سلطان مصطفى خان ثانى<br>Սուլթան Մահմուդ խան Ղազի իբն Սուլթան Մուսթաֆա խան 2-րդ | ۲۴<br>24 |
| دادر خلدن مقرلرى سلطان محمود خان جنبنده مدفوندرلر<br>Լուսահոգի եղբոր՝ Սուլթան Մահմուդ խանի կողքին է թաղված[67]: | ۶۰سنه ۷ماه ۶ يوم<br>Տարի՝ 60<br>Ամիս՝ 7<br>Օր՝ 6 | ۳<br>3 | ۱۱۷۱<br>1171 [1757-58] | ۱۱۶۹<br>1169[59] [1755-56] | ۱۱۱۰<br>1115 [1703-04] | سلطان عثمان خان ثالث ابن سلطان مصطفى خان ثانى<br>Սուլթան Օսման խան 3-րդ իբն Սուլթան Մուսթաֆա խան 2-րդ | ۲٥<br>25 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| جامع شریفلری ساحه سنده تربۀ مخصوصلرنده مدفوندرلر Փառավոր մզկիթի բակում, իր անձնական դամբարանում է թաղված: | ۵۸سنه ۲۴ماه۸ یوم Տարի՝ 58 Ամիս՝ 8 Օր՝ 24[62] | ۱۶ 16[61] | ۱۱۸۷ 1187 [1773-74] | ۱۱۷۱ 1171 [1757-58] | ۱۱۲۹ 1129[60] [1716-17] | سلطان مصطفی خان ثالث ابن سلطان احمد خان ثالث Սուլթան Մուսթաֆա Խան 3-րդ իբն Սուլթան Ահմեդ Խան 3-րդ | ۲۶ 26 |
| بغچه قپوسنده بنا بیوردقلری مدرسه لری اتصالنده تربۀ علیالرنده مدفوندرلر Բաղչեի դրան մոտ կառուցված դպրոցին կից վսեմաշուք դամբարանում է թաղված: | ۶۶سنه ۵ یوم Տարի՝ 66 Օր՝ 5[64] | ۱۶ 16[63] | ۱۲۰۳ 1203 [1788-89] | ۱۱۸۷ 1187 [1773-74] | ۱۱۳۷ 1137 [1724-25] | سلطان غازی عبدالحمید خان ابن سلطان احمد خان ثالث Սուլթան Ղազի Աբդուլ Համիդ Խան իբն Սուլթան Ահմեդ Խան 3-րդ | ۲۷ 27 |
| پدرلری سلطان مصطفی خان ثالث تربه سنده مدفوندرلر Հոր՝ Սուլթան Մուսթաֆա խան 3-րդի, դամբարանում է թաղված: | ۴۸سنه ۶ یوم Տարի՝ 48 Օր՝ 6 | ۱۹ 19[65] | فراغ ۱۲۲۲ ارتحال ۱۲۲۳ Հրաժարվել է՝ 1222 [1807-08] Մահացել է՝ 1223 [1808-09] | ۱۲۰۳ 1203 [1788-89] | ۱۱۷۵ 1175 [1761-62] | سلطان غازی سلیم خان ثالث ابن سلطان مصطفی خان ثالث Սուլթան Ղազի Սելիմ Խան 3-րդ իբն Սուլթան Մուսթաֆա Խան 3-րդ | ۲۸ 28 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| والد ماجدلری سلطان عبدالحمید خان تربه سنده مدفوندرلر<br>Փառավոր հոր՝ Սուլթան Աբդուլ Համիդ խանի դամբարանում է թաղված: | ۳۰سنه ۱ماه<br>Տարի՝ 30<br>Ամիս՝ 1 | ۱<br>1 | فراغ و ارتحال ۱۲۲۳<br>Հրաժարվելն ու մահը՝ 1223 [1808-09] | ۱۲۲۲<br>1222 [1807-08] | ۱۱۹۳<br>1193[66] [1779] | سلطان مصطفی خان رابع ابن عبدالحمید خان<br>Սուլթան Ղազի Մուսթաֆա խան 4-րդ իբն Աբդուլ Համիդ խան | ۲۹<br>29 |
| دیکلی طاش قربنده تربهٔمخصوصلر نده مدفوندرلر<br>Դիքիլի Թաշին մեռձ, իր անձնական դամբարանում է թաղված: | ۵۵سنه ۸ماه ۴ یوم<br>Տարի՝ 55<br>Ամիս՝ 8<br>Օր՝ 4 | ۳۲<br>32 | ۱۲۵۵<br>1255 [1839-40] | ۱۲۲۳<br>1223 [1808-09] | ۱۱۹۹<br>1199 [1784-85] | سلطان غازی محمود خان ثانی ابن السلطان عبدالحمید خان<br>Սուլթան Ղազի Մահմուդ խան 2-րդ իբն ալ Սուլթան Աբդուլ Համիդ խան | ۳۰<br>30 |
| - | - | - | - | ۱۲۵۵<br>1255[67] [1839-40] | ۱۲۳۸<br>1238 [1822-23] | سلطان عبدالمجید خان ابن السلطان الغازی محمود خان<br>Սուլթան Աբդուլ Մեջիդ խան իբն ալ Սուլթան ալ Ղազի Մահմուդ խան | ۳۱<br>31 |

## ՀԱՄԵՄԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[1] Ձեռ. 10716՝ ٦٤١ (641), 5բ; Ա գավ.՝ ٦٤١ (641) , 37ա:
[2] Գ գավ.՝ 27 սէնէ, 3 այ:
[3] Ձեռ. 10716՝ կթ (69), 5բ; Դ.ժ. 1041/1329՝ 69, Ա գավ.՝ 85, 37ա; Բ գավ.՝ 85:
[4] Դ.ժ. 1041/1329՝ 31; Ա գավ.՝ ٣٠ (30); Բ գավ.՝ 25; Գ գավ.՝ 31;
[5] Ձեռ. 10716՝ ձբ (82), 6ա; Դ.ժ. 1041/1329՝ 82; Ա գավ.՝ ٨٢ (82); Բ գավ.՝ 71;
[6] Ձեռ. 10716՝ ٧٢٦ /٧٢٧ (726/727), 6բ; Ա գավ.՝ ٧٢٧ (727), 37ա:
[7] Ձեռ. 10716՝ ٧٩٢ (792), 7ա; Դ. ժ. 1041/1329՝ 792:
[8] Դ.ժ 1041/1329՝ 66:
[9] Ձեռ. 10716՝ ٧٤٨/٧٦١ (761/748), 7ա; Ա գավ.՝ ٧٤٨ (748), 37բ:
[10] Ձեռ. 10716՝ ٧٩٢ (792), 7ա; Դ.ժ. 1041/1329՝ 792; Ա գավ.՝ ٧٩٢ (792), 37բ: Բ գավ.՝ 792, Գ գավ.՝ 792:
[11] Ձեռ. 10716՝ ٨٠٨/٨٠٥ (808/805), 8ա; Դ.ժ. 1041/1329՝ 808:
[12] Ձեռ. 10716՝ ժդ (14) տարի և գ (3) ամիս; Դ.ժ. 1041/1329՝ 14 ամս և ամիսս 3; Գ գավ.՝ 17 սէնէ:
[13] Ձեռ. 10716՝ ծը (58), լուսանցքում՝ խե (45); Դ.ժ. 1041/1329՝ 45; Ա գավ.՝ ٥٨ (58), 37բ; Բ գավ.՝ 58:
[14] Ձեռ. 10716՝ ٧٦١/ ٧٧٧(777/761), 8բ; Ա գավ.՝ ٧٧٧(777):
[15] Ձեռ. 10716՝ ժդ (14) տարի և գ (3) ամիս, ոմանք ասեն՝ ը (8), 8բ; Դ.ժ. 1041/1329՝ 14 տարի և 3 ամիս, նաև՝ 8; Բ գավ.՝ 10 տարի և 8 ամիս; Գ գավ.՝ 8 սէնէ, 3 այ;
[16] Ձեռ. 10716՝ ծգ (53), լուսանցքում՝ խգ (43), 8բ; Դ.ժ. 1041/1329՝ 43 կամ 47; Ա գավ.՝ ٤٩ (49); Բ գավ.՝ 49:
[17] Ա գավ.՝ ٨٠٩ (809), 37բ:
[18] Բ գավ.՝ 826:
[19] Ձեռ. 10716՝ լա (31) տարի և զ (6) ամիս և ը (8) օր; Դ.ժ. 1041/1329՝ 30 սէնէ, 6 այ, վէ 8 կիւն; Ա գավ.՝ ٣١ (31) 37բ; Բ գավ.՝ 31, Գ գավ.՝ 30 սէնէ, 6 այ, վէ 8 կիւն:
[20] Ձեռ. 10716՝ ٨٣٥/٨٣٠ (835/830), 10բ; Ա գավ.՝ ٨٣٥ (835), 38ա; Դ. ժ. 1041/1329՝ 830:
[21] Ձեռ. 10716՝ ٨٨٥/٨٨٦ (886/885), 15ա:
[22] Ձեռ. 10716՝ լա (31), 10բ; Դ. ժ. 1041/1329՝ 31; Ա գավ.՝ ٣١ (31), 38ա; Բ գավ.՝ 31; Գ գավ.՝ 31 :
[23] Ձեռ. 10716՝ ծա (51) լուսանցքում՝ ծզ (56), 10բ; Դ. ժ. 1041/1329՝ 56; Ա գավ.՝ ٥١ (51), 38ա; Բ գավ.՝ 51:
[24] Ձեռ. 10716՝ ٨٥١/٨٥٦ (851/856), 38ա; Ա գավ.՝ ٨٥٦ (856):
[25] Ձեռ. 10716՝ ٦٢ (62), լուսանցքում՝ ٦٧ (67), 12ա; Ա գավ՝ ٦٣ (63), 38ա; Բ գավ.՝ 62; Գ գավ.՝ 62:
[26] Ձեռ. 10716՝ ٨٧٢/٨٧٥ (872/875); Ա գավ.՝ ٨٧٢ (872), 38ա;
[27] Ձեռ. 10716՝ ը (8) և կես, 14ա; Դ.ժ. 1041/1329՝ 8 սէնէ 6 այ; Ա գավ.՝ ٨ (8) ամ և ٩ (9) ամիս 38ա; Բ գավ.՝ 8 տարի և 9 ամիս; Գ գավ.՝ 8 սէնէ, 6 այ:
[28] Ձեռ. 10716՝ ծդ (54), լուսանցքում՝ ծա (51), 14ա, Ա գավ.՝ ٥٤ (54), 38ա; Բ գավ.՝ 54:
[29] Ա գավ.՝ ٩٢٩ (929), 38բ:
[30] Ձեռ. 10716՝ ٩٨٢ (982), 22բ; Դ. ժ. 1041/1329՝ 982:
[31] Ձեռ. 10716՝ ը (8) և ամիսն ե (5) և օր ժե (15) 22ա; Դ. ժ. 1041/1329՝ 8 սէնէ, 5 այ, 15 կիւն; Ա գավ.՝ 9, 38բ; Բ գավ.՝ 9; Գ գավ.՝ 8 սէնէ, 5 այ, 15 կիւն:
[32] Ձեռ. 10716՝ ծգ (53), 22ա; Դ. ժ. 1041/1329՝ 54; Ա գավ՝ ٥٤ (54), 38բ; Բ գավ.՝ 54:
[33] Դ. ժ. 1041/1329՝ 20 սէնէ, 8 այ; Ա գավ.՝ ٢١ (21); Բ գավ.՝ 21:
[34] Ձեռ. 10716՝ թ (9) և ամիսն բ (2), 26բ; Դ. ժ. 1041/1329՝ 9 սէնէ, 2 այ; Ա գավ.՝ ٩ (9) սէնէ ٢ (2) այ, 39ա; Գ գավ.՝ 9 սէնէ, 2 այ սալթանաթ:
[35] Ա գավ.՝ ٩٩٦ (996), 39ա:
[36] Ձեռ. 10716՝ ժդ (14) և ամիս դ (4), 28ա; Դ. ժ. 1041/1329՝ 14 սէնէ, 4 այ; Ա գավ.՝ ١٤ (14) սէնէ ٤ (4) այ, 39ա; Գ գավ.՝ 14 սէնէ 4 այ:
[37] Ա գավ.՝ ٣١ (31), 39ա; Բ գավ.՝ 30:
[38] Ձեռ. 10716՝ ١٠١٣ (1013), 29ա:

[39] Գ գավ.՝ 4 սէնէ, 4 այ:
[40] Ջեռ. 10716՝ ١٠٠٠/١٠٠١ (1000/1001), ոմանք գրէն ٩٩٥ (995), 29ա; Դ. ժ. 1041/1329՝ 1001/995;
Ա. գավ.՝ ٩٩٠ (990), 39բ:
[41] Ջեռ. 10716՝ 4 ամիս, յետ և յառաջ ամիսս ժէ (17), լուսանցքում՝ ,٤ (4) և ١٦ (16) ամիս յետոյ թագաւորեացե, 29ա; Դ. ժ. 1041/1329՝ 4 այ + 17 այ; Ա. գավ.՝ 1 ամ ٤ (4) այ; Բ գավ.՝ 16 ամիս:
[42] Ա. գավ.՝ ٥٩ (59), 39բ:
[43] Ջեռ. 10716՝ լա (31); Դ.ժ. 1041/1329՝ 31; Ա. գավ.՝ ٣٣ (33), 39բ; Բ գավ.՝ 33:
[44] Ջեռ. 10716՝ ١٠٢٦/١٠٢٤ (1026/1024), 36ա; Ա. գավ.՝ ١٠١٨ (1018), 40ա:
[45] Ջեռ. 10716՝ ը (8) և կէս, 36ա; Դ. ժ. 1041/1329՝ 8 սէնէ, 6 ա; Ա. գավ՝ ٨ (8) ամ, ٩ (9) այ 40ա; Բ գավ.՝ 8 տարի և 9 ամիս:
[46] Ջեռ. 10716՝ լբ (32), 36ա; Դ. ժ.1041/1329՝ 32; Ա. գավ՝ ٤٠ (40), 40ա; Բ գավ.՝ 40:
[47] Ջեռ. 10716՝ ١١٠٧ (1107), 39ա; Ա. գավ.՝ ١١٠٧ (1107), 40ա:
[48] Ջեռ. 10716՝ ١٠٥٣/١٠٥١ (1053/1051), 40բ; Դ. ժ.1041/1329՝ 1051:
[49] Բ գավ.՝ 1095:
[50] Դ. ժ. 1041/1329՝ 3 տարի, 8 ամիս, 23 օր; Ա. գավ.՝ ٢(2) տարի, ամիսն ٩ (9), 40ա; Գ գավ.՝ 4 սէնէ:
[51] Ջեռ. 10716՝ ٤٩/٥١ (49/51), 40բ; Դ. ժ. 1041/1329՝ 51:
[52] Ջեռ. 10716՝ ١٠٥١ (1051), 41ա; Դ. ժ. 1041/1329՝ 1051:
[53] Ջեռ. 10716՝ լուսանցքում ٣ (3) ամ,٩ (9) ամիս; Դ. ժ. 1041/1329՝ 3 սէնէ, 9 այ; Ա. գավ.՝ ٣ (3) ամ. ١٠ (10) ամիս, 40բ; Բ գավ.՝ 4 տարի, 8 ամիս, 23 օր:
[54] Ջեռ. 10716՝ ١١٠٢ (1102):
[55] Ա. գավ՝ ٩ (9), 40բ:
[56] Ջեռ. 10716՝ ٤١ (41), 43ա; Դ. ժ. 1041/1329՝ 41; Ա. գավ՝ ٤١ (41), 40բ:
[57] Բ գավ.՝ 28 տարի, 8 ամիս և 8 օր:
[58] Բ գավ.՝ 1142:
[59] Դ. ժ. 1041/1329՝ 1168; Բ գավ.՝ 1168; Գ գավ.՝ 1168:
[60] Ջեռ. 10716՝ ١١٣٠ (1130), 47ա:
[61] Ջեռ. 10716՝ 16 սէնէ, 8 այ, 23 կիւն, 47ա; Դ. ժ. 1041/1329՝ 16 սէնէ, 8 այ, 23 կիւն:
[62] Ջեռ. 10716՝ ٥٧ (57), 47ա; Դ. ժ. 1041/1329՝ 57:
[63] Ջեռ. 10716՝ ժե (15) և ամիսս 2 և աւուրս 7, 55ա:
[64] Ջեռ. 10716՝ 65, 55ա:
[65] Ջեռ. 10716՝ ١٩ (19), ամիսս ٦ (6) և աւուրս ١٢ (12), 71ա:
[66] Ջեռ. 10716՝ ١١٩٤ (1194), 82ա:
[67] Գ գավ.՝ «Սուլթան Ապտըլ Մաճիտ ١٢٥٥ (1255) սէնէին ի գահ իշխանութեան նստեալ լինի ի քսան եւ երկու տարեկան»: